

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

ՆՈՒՆԻԴ ԹԵԼՅԱՆ

Նախադասության իմաստային կողմի քննությունը քերականագիտության դժվարին հարցերից է: Առավել բարդ և տարակարծիք մեկնաբանություններ հարուցող խնդիր է բարդ նախադասության նշանակության, նրա կառուցվածքի և արտահայտած իրական հարաբերությունների կապի բացահայտումն ու մեկնաբանումը:

Բարդ նախադասության նշանակությունը ոչ թե նրա կազմի մեջ մտնող պարզ նախադասությունների նշանակությունների մեխանիկական գումարն է, այլ դրանց այնպիսի միահյուսումը, որն առաջ է բերում նոր որակ թե՛ շարահյուսական-կառուցվածքային, թե՛ իմաստային առումներով: Բարդ նախադասության բովանդակությունը, ուրեմն, այն կազմող պարզ նախադասություններում դրսևորված բովանդակությունների հարաբերությունն է: Վերջինս լեզվական արտահայտություն կարող է ստանալ կամ կապակցական հատուկ միջոցների (շաղկապներ և հարաբերական բառեր), կամ էլ կառուցվածքային այլ հատկանիշների (անշաղկապ կապակցության դեպքում) տեսքով: Կառուցվածքային և իմաստային այս առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն բարդ նախադասությունների համանիշական կապերի ուսումնասիրության ընթացքում:

Հայերենում շարահյուսական համանիշության երևույթին նվիրված առաջմ միակ ուսումնասիրությունը բանասիրական գիտությունների դոկտոր Ն. Ա. Պառնասյանի գիրքն¹ է, որի մեջ սպառելի մանրամասնությամբ քննված են պարզ նախադասությանը վերաբերող շարահյուսական համանիշները: Համանիշության երևույթը բազմազան դրսևորումներ ունի նաև արդի հայերենի բարդ նախադասությունների համակարգում: Այս հարցի քննությունը կարելի է ինչպես բարդ նախադասության կառուցվածքային տարբերակների բացահայտման, այնպես էլ կառուցվածքների ոճական կիրառությունների բնութագրությունն ամբողջացնելու առումով:

Ընդհանրապես բարդ նախադասության, և մասնավորապես ժամանակային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների² ոլորտում համանիշական կապերի քննությունը ձեռնարկելուց առաջ անհրաժեշտ է ճշտել տեսական-մեթոդական բնույթի որոշ հարցեր, որոնք թելադրվում են հենց բարդ նախադասության կառուցվածքային առանձնահատկություններով:

Ինչպես ընդունված է հայերենի շարահյուսությանը նվիրված աշխատություններում, ժամանակի նշանակություն արտահայտող բարդ նախադասու-

¹ Ն. Ա. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:

² Ուսումնասիրությունը կատարված է ժամանակային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների նյութի հիման վրա:

թյունների միջոցով դրսևորվում են ժամանակային հետևյալ հարաբերությունները.

1. Համաժամանակություն իր երկու դրսևորումներով՝

ա) լիակատար համաժամանակություն


բ) մասնակի համաժամանակություն:

2. Տարժամանակություն իր երկու դրսևորումներով՝

ա) նախորդում

բ) հաջորդում³:

Իմաստային այս հարաբերությունները կարելի է արտահայտել գծապատկերի միջոցով (գծ. 1):



Գծ. 1:

Այս իմաստների դրսևորմանը ծառայող համանիշ բարդ կառուցվածքների քննությունը ամենից առաջ ենթադրում է յուրաքանչյուր կոնկրետ ժամանակային հարաբերության համար համանիշ կառուցվածքների շարքի առանձնացում: Բարդ նախադասության կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ միևնույն առարկայական բովանդակությունը, տվյալ դեպքում ժամանակային այս կամ այն հարաբերությունը, կարող են արտահայտել առարքի կարգի բարդ կառուցվածքներ՝ համադասական և ստորադասական տիպերն իրենց անշաղկապ և շաղկապվոր տեսակներով⁴, ինչպես նաև նույն տիպի մեջ մտնող, սակայն մասերի քերականական հարաբերության բնույթով տարբերվող կառուցվածքներ: Այսպես, օրինակ, ժամանակային հաջորդման հարաբերություն արտահայտում են ժամանակի պարագա երկրորդական նախադասությամբ ստորադասական, ինչպես նաև համադասական տիպի համապատասխան կառուցվածքների շաղկապվոր և անշաղկապ տեսակները: Նույն այդ հարաբերությունը երկրորդաբար դրսևորվում է նաև այնպիսի կա-


³ Նկատի է առնվում ստորադասական տիպի դեպքում՝ երկրորդական նախադասության մեջ արտահայտված գործողության՝ դիտարկի գործողությանը նախորդելը կամ հաջորդելը, իսկ համադասական տիպի դեպքում՝ երկրորդ բաղադրիչի մեջ արտահայտված նախորդման կամ հաջորդման հարաբերությունը առաջինի նկատմամբ:

⁴ Տե՛ս, տեսակ անվանումներն այսպիսի կիրառությամբ ընդհանրացած շին և այստեղ գործածվում են որոշ պայմանականությամբ (հմտ. Н. И. Формановская, СТП-Листинка сложного предложения, М., 1978, с. 3—4).

ոուցվածքների միջոցով, որոնց մասերի միջև առկա են իմաստային և քերականական այլ, հատկապես՝ պայմանի, նպատակի, պատճառա-հետևանքային հարաբերություններ:

Համեմատենք հետևյալ նախադասությունները.

- I. Երբ հայրը վերադարձավ, տանն ամեն ինչ փոխվեց:
- II. Հայրը վերադարձավ, և տանն ամեն ինչ փոխվեց:
- III. Հայրը վերադարձավ, տանն ամեն ինչ փոխվեց:
- IV. Եթե հայրը վերադառնա, տանն ամեն ինչ կփոխվի:
- V. Տանն ամեն ինչ փոխվեց, որովհետև հայրը վերադարձավ:
- VI. Հայրը վերադարձավ, որպեսզի տանն ամեն ինչ փոխվի և այլն:



Գծ. 2:

Այս նախադասություններում առկա է երկու գործողությունների ժամանակային հաջորդման իմաստը. I—III կառուցվածքներում դա հիմնականն է և գերիշխողը, իսկ IV—VI կառուցվածքներում հանդես է գալիս երկրորդաբար, ուղեկցում է դրանց հիմնական փաստաներին: Հաշվի առնելով նաև այս վերջին կարգի կառուցվածքները, կարելի է ժամանակային հարաբերություններ դրսևորող բարդ նախադասությունների նշանակությունների փոխհարաբերությունը ներկայացնել գծապատկերով⁵ (գծ. 2):

⁵ Գծապատկերն, իհարկե, չի արտացոլում այն բոլոր բարդ կառուցվածքները, որոնցում չերկրորդաբար կարող է դրսևորվել ժամանակային իմաստ:

Ժամանակային հարաբերություններ դրսևորող բարդ նախադասությունների կառուցվածքային բազմազանությունը բացատրվում է իրականության մեջ երկու գործողությունների կատարման ժամանակների միջև բազմազան հարաբերությունների հնարավորությամբ (նկատի ունենք միայն երկբաղադրիչ կառուցվածքները): Հայերենում անցյալ և ապառնի ժամանակներին վերաբերող քաղաձեռքի առատությունը, ինչպես նաև ժամանակային նույն ձևի՝ տարբեր իմաստներով կիրառվելու հնարավորությունը ժամանակային նշանակությամբ բարդ նախադասությունների քանակի բազմապատկող գործոններ են, քանի որ միևնույն հարաբերությունը կարող է արտահայտվել, ասենք, ժամանակի տարբեր հատվածների համար՝ շարահյուսական նույնատիպ կառուցվածքներով, որոնք որոշակի հարացույց են ներկայացնում: Համեմատենք լիակատար համաժամանակություն արտահայտող հետևյալ նախադասությունները.

1. Երբ Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է:

2. Երբ Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում էր:

3. Երբ Արայիկը դաս է պատասխանել, ուսուցիչը գոհ ժպտացել է:

Այստեղ պետք է անպայման հաշվի առնել, որ բարդ նախադասության մասերի մեջ գործառող բայաձևերի եղանակա-ժամանակային որոշակի համապատասխանությունն ինքնին կառուցվածքային հատկանիշ է և կարող է փոխել հարաբերության բնույթը: Բերվող կառուցվածքում, օրինակ, մասերի մեջ անցյալ կատարյալի կիրառությամբ համաժամանակությունը փոխվում է նախորդման՝ Երբ Արայիկը դաս պատասխանեց, ուսուցիչը գոհ ժպտաց: Ընդհանրապես բարդ նախադասության տվյալ կառուցվածքային սխեմայի կոնկրետ իրացումները կարող են միանշանակ չլինել: Այստեղ կարևոր դեր են կատարում մասերի բառակազմը, հաղորդման կոնկրետ իրադրությունը, հաղորդման նպատակը:

Անդրադանալով վերոբերյալ 1—3 կարգի կառուցվածքներին, պետք է ասել, որ դրանցից յուրաքանչյուրն ունի կառուցվածքային իր տարբերակները, որոնք դրսևորում են նույն՝ համաժամանակության հարաբերությունը՝ ժամանակի միևնույն հատվածի սահմաններում: I-ին նախադասության համար, օրինակ, կարելի է բերել կառուցվածքային այսպիսի տարբերակներ.

4. Երբ որ Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է:

5. Որ Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է:

6. Քանի Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է և այլն:

1—6 կառուցվածքներից յուրաքանչյուրի մեջ արտահայտված է լիակատար համաժամանակության հարաբերություն, սակայն անհայտ է, որ դրանք իմաստային նույն խմբում միավորվել չեն կարող: Ի՞նչ սկզբունքով կարելի է դասդասել այդ կառուցվածքները: Նպատակահարմար է օգտվել իմաստային դաշտի հասկացությունից: Բառապաշարի իմաստաբանական քննության ժամանակ սովորաբար առանձնացվում են երկու կարգի իմաստային դաշտեր՝ համանիշական և ստորակցական (гипонимическое): Վերջին նշանակությամբ բառը, որը նշում է իմաստային գոտին և որի հիմքի վրա ձևավորվում է բառային դաշտը (wortfeld), սովորաբար կոչվում է գերիշխող անդամ (доминанта կամ идентификатор): Գերիշխող անդամն իմաստային այն անփոփոխակն է, որը կայուն է մնում ամբողջ դաշտի և նրա յուրաքան-

շուր անդամի համար: Դաշտի ամեն մի անդամի նշանակության այն կողմը, որ դուրս է մնում գերիշխող անդամի նշանակությունից, վերաբերում է դաշտի տարրերակիշ (дифференцирующей) մասին»⁶: Բառերի նշանակությունների այս տարբերակվող մասերն էլ կազմում են դաշտի ներսում բառերի իմաստային հակադրության հիմքը:

Ստորակցական դաշտի դեպքում գերիշխող անդամը բուն դաշտը կազմող անդամներից մեկ աստիճան բարձր է, այնպես որ դաշտ կազմող անդամների և գերիշխող անդամի իմաստները գտնվում են տեսակ-սեռ հարաբերության մեջ (հմտ. գունային անվանումների դաշտը՝ գույն գերիշխող անդամով): Համանիշական դաշտի գերիշխող անդամը մտնում է նույն այդ դաշտի մեջ իբրև հավասարազոր անդամ: Երկու դեպքում էլ գերիշխող անդամի նշանակությունն առկա է դաշտի յուրաքանչյուր անդամի նշանակության մեջ իբրև իմաստային անփոփոխակ: Եթե այս հայեցակետով դիտարկենք բերված 1—6 կառուցվածքները, ապա կպարզվի, որ 1—3 կառուցվածքները միևնույն լիակատար համաժամանակություն հարաբերության դրսևորումներն են տարբեր ժամանակահատվածների համար (լիակատար համաժամանակություն ներկայում, լիակատար համաժամանակություն անցյալում և այլն), այսինքն սրանց նշանակությունները կազմում են ստորակցական իմաստային դաշտ: Իբրև այս դաշտի գերիշխող անդամ, ըստ երևույթին, պետք է ընդունել լիակատար համաժամանակություն արտահայտող բարդ կառուցվածքների ընդհանրական բանաձևը (կառուցվածքային սխեման): Վերջինիս նշանակությունը, որն այդ նույն հարաբերությունն արտահայտող կոնկրետ նախադասությունների նշանակություններից ստացված մի վերացություն է, միշտ մեկ աստիճան բարձր կլինի իր մասնավոր իրացումների (տվյալ դեպքում՝ 1—3 կառուցվածքների) նշանակություններից և վերջիններիս նկատմամբ կգտնվի սեռ-տեսակ տրամաբանական կապի մեջ:

Ընդունելով շարահյուսական համանիշների՝ Ն. Ա. Պառնասյանի աշխատության մեջ տրված սահմանումը⁷, 4—6 կարգի կառուցվածքների միջև առկա հարաբերությունը պետք է համարել համանիշական և դրանք դիտել իբրև համանիշական իմաստային դաշտի անդամներ: Սակայն հաշվի առնելով պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքաիմաստային տարբերությունները, անհրաժեշտ է պատասխանել սկզբունքային կարևորություն ունեցող մի հարցի. ի՞նչը պետք է հիմք ընդունել տվյալ բարդ կառուցվածքները համանիշ կոչելու համար. դրանց միջոցով արտահայտվող իրական-առարկայական բովանդակությունը, թե՞ կառուցվածքների քերականական իմաստները: Ըստ երևույթին առավել նպատակահարմար է համանիշ դիտել միայն քերականական իմաստների ընդհանրությամբ միավորվող բարդ նախադասությունները, հակառակ դեպքում համանիշ բարդ նախադասությունների ընդգրկման սահմանները կընդարձակվեն և գրեթե անհնար կլինի դրանց առանձնացման համար շափանիշներ գտնել:

Առարկայական բովանդակությունը հիմք ընդունելու դեպքում համանիշ պետք է համարվեն իրենց քերականական-տիպային նշանակությամբ բոլոր-

⁶ В. В. Богданов, Семантико-синтаксическая структура предложения, Л., 1977, с. 15. Բառապաշարի իմաստային խմբերի մասին տե՛ս նաև Д. Ж. Лайонэ, Введение в теоретическую лингвистику, М., 1978, с. 467—478.

⁷ Ն. Ա. Պառնասյան, նշվ. աշխ., էջ 38.

րովին տարբեր կառուցվածքներ, որպիսիք են, ասենք, Նս տեսա, որ նա մտավ սրճարան, Նս տեսա նրան, երբ նա մտավ սրճարան, Նս տեսա, թե ինչպես նա մտավ սրճարան և նման այլ կարգի նախադասություններ: Անհրաժեշտ է նշել նաև, որ համանիշության որոշման քերականական հիմունքի բացարձակացումը կարող է հանգեցնել հակառակ ծայրահեղության: Ի. Ի. Կովտունովան, օրինակ, խոսելով քերականական համանիշության երևույթի՝ քերականական շրջանակների մեջ քննելու անհրաժեշտության մասին, նախադասությունների համանիշության պարապիր պայման է համարում դրանց կառուցվածքների շարահյուսական լիակատար զուգահեռությունը⁸, Քննության այսպիսի հայեցակետը, ինչպես ճիշտ կերպով նկատել են ուսումնասիրողները⁹, ակնհայտորեն սահմանափակում է լեզվի՝ համանիշական (և նույնափոխական) հարաբերություններ դրսևորելու հնարավորությունները: Նման մոտեցմամբ համանիշ չեն վարող համալսել այնպիսի վառուցվածքներ, ինչպիսիք են, օրինակ, դերբայական դարձվածով ու կապական կապակցություններով պարզ և համապատասխան բարդ նախադասություններ: Ուրեմն, բարդ նախադասությունների համանիշության հիմքում ղենելով դրանց քերականական իմաստների ընդհանրությունը, պետք է ջնդունել դրանց կառուցվածքային զուգահեռության, ինչպես նաև բառակազմի նույնականության որոշ թույլատրելի խախտումներ:

Այսպիսով, դիտարկվող 4—6 կարգի նախադասությունները նույն համանիշական դաշտում միավորվում են իրենց քերականական իմաստների ընդհանրության հիմունքով: Բառային համանիշական դաշտի նմանությամբ այստեղ էլ գերիշխող անդամը պետք է մտնի դաշտի անդամների թվի մեջ (հմմտ. վախ, երկյուղ, սարսափ... շարքը՝ վախ գերիշխող անդամով): Այս դեպքում, հավանաբար, դաշտի գերիշխող անդամ պետք է համարվի այն կառուցվածքը, որն առավելագույն համարժեքությամբ, առանց լրացուցիչ իմաստային երանգների, արտացոլում է տվյալ իրական հարաբերությունը, ավելի հաճախադեպ է և ունի ոճական չեղորոշություն: Մասնավորապես լիակատար համաժամանակության հարաբերություն արտահայտող կառուցվածքների համանիշական դաշտի գերիշխող անդամ կարող է դիտվել երբևէ կապվող ստորադասական տիպի կառուցվածքը: Իրական երկու գործողությունների կատարման միաժամանակության լեզվական համարժեք արտացոլումն այստեղ պայմանավորվում է երբ հարաբերականի բառային իմաստով և մասերի ստորոգյալների ժամանակային համապատասխանությամբ: Ոճական տեսակետից ևս սա ունի առավելագույն չեղորոշություն և լեզվի մեջ համաժամանակություն արտահայտող ամենատարածված կառուցվածքն է¹⁰: Որ, քա-

⁸ И. И. Ковтунова, О синтаксической синонимике («Вопросы культуры речи», вып. I, М., 1955).

⁹ Л. Ю. Максимов, О грамматической синонимике в русском языке («Русский язык в национальной школе», 1966, № 2); М. М. Игнатьева, К истории развития определения синтаксических синонимов («Ученые записки Московского педагогического института им. Ленина», 1964, № 240).

¹⁰ Տարժամանակություն արտահայտելու համար ևս երբ հարաբերականով կապվող կառուցվածքներն ավելի սովորական են և տարածված, այնպես որ երբ հարաբերականը, այլ կառուցվածքային հատկանիշների հետ զուգորդվելով, կարող է գերիշխող անդամ ձևավորել այլ համանիշական դաշտերի համար:

նի, մինչդեռ և այլ շաղկապներով կառույցները մտնում են երբ-ով կապվող գերիշխող անդամի համանիշական դաշտը՝ հակադրվելով նրան իմաստային կամ ոճական որոշակի նրբերանգներով: Քանի-ով կապվող կառուցվածքը, օրինակ, գերիշխող կառուցվածքին հակադրվում է ժամանակային սահմանափակման երանգով, որ-ով կառուցվածքը՝ գերազանցապես խոսակցական ոճում զորանույն յուրահատկությամբ և այլն:

Վերը շարադրված մոտեցումը կիրառելի է ինչպես ժամանակային, այն-պես էլ իմաստային այլ հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների դասակարգման համար: Պետք է նկատի առնել միայն, որ տվյալ իմաստային հարաբերությունը դրսևորող կառուցվածքների ստորակցական դաշտի անդամների քանակը պայմանավորված է մասերի մեջ լայական ժամանակների գործածության ազատությամբ: Վերևում բերված օրինակները (1—3) վերաբերում էին լիակատար համաժամանակություն արտահայտող նախադասություններին, որոնց մասերի մեջ հնարավոր է տրամաբանական երեք ժամանակների (ներկա, անցյալ, ապառնի) բայաձևերի կիրառությունը: Սակայն մասնակի համաժամանակություն արտահայտող կառուցվածքներում, օրինակ, բայաձևերի գործածության այսպիսի ազատություն չկա: Քանի որ այս կարգի բարդ նախադասության մասերից մեկում պետք է արտահայտվի տեական գործողություն, իսկ մյուսում՝ այդ գործողության որևէ պահին կատարվող մեկ այլ գործողություն, բնականաբար այս նշանակությամբ կառուցվածքները, արդի հայերենի օրինաչափություններին համապատասխան, պետք է թույլատրեն անցյալ անկատար և անցյալ կատարյալ բայաձևերի զուգորդում:

Կառուցվածքային նշված հատկանիշը, սահմանափակելով այս կառուցվածքների ստորակցական դաշտը, նույնպիսի ազդեցություն չունի դրանց համանիշական դաշտի անդամների թվի վրա:

Ժամանակային հարաբերություններ արտահայտող համանիշ բարդ կառուցվածքների սահմանները ճշտելուց հետո անցնենք համանիշական յուրաքանչյուր դաշտը կազմող կառուցվածքների միջև գոյություն ունեցող հարաբերությունների բացահայտմանը: Ինչպես արդեն նշեցինք, համանիշական դաշտի գերիշխող անդամն իր նշանակությամբ առավելագույն չափով ճիշտ 'և համարժեքորեն է արտացոլում իրական տվյալ հարաբերությունը, մինչդեռ չաշտի մյուս անդամները, չինելով նույն այդ բովանդակության արտահայտիչներ, հակադրվում են միմյանց և գերիշխող անդամին իրենց նշանակության այս կամ այն կողմով: Նշանակության այս տարբերակվող մասը, աստիճանաբար աճելով, կարող է հասնել այնպիսի աստիճանի, երբ տվյալ անդամի իմաստային առնչությունը դաշտի գերիշխող անդամի հետ այլևս կղաղարի համանիշական կապ լինելուց: Հենց այսպիսին է վերը բերված ժամանակային հաջորդման և, ասենք, նպատակի հարաբերություն արտահայտող կառուցվածքների միջև եղած կապը (տե՛ս I և VI օրինակները): Համեմատենք նաև հետևյալ նախադասությունները.

Ա. Նա այնքան լավ էր երգում, որ դահլիճը հիացմունքից քարացել էր:

Բ. Նա այնպես լավ էր երգում, որ դահլիճը հիացմունքից քարացել էր:

Գ. Նա լավ էր երգում, այնպես որ դահլիճը հիացմունքից քարացել էր:

Այս երեք նախադասություններում էլ արձանագրված է նույն իրական փաստը, դրսևորված է միևնույն առարկայական բովանդակությունը: Սա-

կայն առաջին կառուցվածքի մեջ երկրորդական նախադասությամբ արտահայտված է շփի նշանակություն, երկրորդում՝ ձևի, իսկ երրորդում՝ հետևյալնքի: Սրանք քերականական տարբեր իմաստների կրողներ են, հետևաբար պատկանում են տարբեր համանիշական դաշտերի: Հետևելով Ա. Ֆ. Միխեևի սկզբունքին¹¹, կարելի է բարդ կառուցվածքների համանիշական դաշտում առանձնացնել համանիշության տարբեր աստիճաններ՝ ըստ դաշտը կազմող անդամների՝ գերիշխող անդամի հետ ունեցած իմաստային սերտության չափի: Այսպես, միևնույն տիպին վերաբերող այն համանիշ բարդ կառուցվածքները, որոնք արտահայտում են իմաստային և քերականական նույն հարաբերությունները և տարբերվում են միայն կապակցության միջոցներով, կազմում են զուգահեռություն (параллелизм): Այսպիսի կապի մեջ են, օրինակ, երբ նա դաս է պատասխանում, ուսուցիչները սիրալիք ժպտում են և երբ ու դաս է պատասխանում, ուսուցիչները սիրալիք ժպտում են կառուցվածքները: Հայերենում այս կարգի կառուցվածքների կապը հարմար է կոչել նույնանիշություն տերմինով: Նույնանիշական կապի մեջ են նաև բարդ կառուցվածքների շարադասական տարբերակները (այսպես կոչված ճկուն կառուցվածքի նախադասությունների դեպքում՝ հմտ. Ուսուցիչը գոհ ժպտում էր, երբ Արայիկը դաս էր պատասխանում և Ուսուցիչը, երբ Արայիկը դաս էր պատասխանում, դոհ ժպտում էր):

Երր տվյալ համանիշ բարդ կառուցվածքները միմյանց հակադրվում են ոչ միայն կապակցության միջոցներով, այլև զրուկորում են նրբիմաստային և ոճական-կիրառական շոշափելի տարբերություններ, այս դեպքում առկա է բուն համանիշությունը (Ա. Ֆ. Միխեևի հոգվածում գործածված է СИНОНИМНОСТЬ տերմինը): Այսպիսի կապի մեջ կարող են գտնվել նաև տարբեր տիպերի ու տեսակների պատկանող կառուցվածքներ: Բուն համանիշական կապի մեջ են, օրինակ, հետևյալ կառուցվածքները.

Երբ Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է:

Քանի Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է:

Մինչդեռ Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է:

Արայիկը դաս է պատասխանում, և ուսուցիչը գոհ ժպտում է և այլն¹²:

Այն դեպքում, երբ նույնն է բարդ կառուցվածքների մեջ արտահայտված իրական-առարկայական բովանդակությունը, սակայն տարբեր են մասերի միջև գոյություն ունեցող քերականական հարաբերությունները, առկա է այլ բնույթի կապ՝ հարակցություն (смежность, տե՛ս Ա—Գ օրինակները): Այս վերջինը դուրս է համանիշության ոլորտից, մինչդեռ առաջին երկուսը (նույնանիշություն և բուն համանիշություն) լայն առումով շարահյուսական համանիշության (синтаксическая синонимика) երևույթի տարբեր զրուկորումներն են:

Համանիշական դաշտ կազմող բարդ կառուցվածքների այսպիսի տարբերակումն օգտակար է այն տեսակետից, որ ցուցադրում է կառուցվածքի

¹¹ А. Ф. Михеев, Синтаксическая синонимика в системе сложных предложений, выражающих причинно-следственные отношения в современном русском языке («Грамматический строй современного русского языка», Куйбышев, 1964, с. 159—161).

¹² Բուն համանիշության հարաբերություն գոյություն ունի նաև բարդ և համապատասխան պարզ կառուցվածքների միջև՝ հմտ. Արայիկի՝ դաս պատասխանելու ժամանակ ուսուցիչը գոհ ժպտում էր:

և նրա արտահայտած բովանդակության միջև գոյություն ունեցող կապի սերտության աստիճանը:

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, տվյալ գերիշխող անդամի համանիշական դաշտի մեջ մտնող անդամները կարող են ստացվել այդ կառուցվածքի որոշակի փոխակերպումներով: Այս սկզբունքը, թիրոք, կարող է հանդիսանալ շարահյուսական համանիշների որոշման շահանիշ: Եթե մեկ շարահյուսական կառուցվածքը կարելի է ենթարկել այնպիսի կառուցվածքային քերականական փոփոխության, որի ընթացքում շարահյուսական հարաբերությունների հիմքում ընկած առարկայական հարաբերությունները մնում են նույնը՝ ձևեր բերելով միայն ոճական, նրբերանգային տարբերություններ, ապա գործ ունենք տվյալ հարաբերությունների դրսևորման համանիշ ձևերի հետ»¹³:

Ընդհանրապես շարահյուսական համանիշության, և հատկապես բարդ նախադասությունների համանիշության կարևոր պայման է կառուցվածքների հիմնական բառակազմի նույնականությունը: Բարդ նախադասությունների կառուցվածքների համանիշությունը հանգում է փաստորեն միայն այդ կառուցվածքների միջև իմաստային-քերականական կապի դրսևորման համանիշ ձևերին և մասերի բառակազմի նույնականությունն ինքնին ենթադրվում է: Համանիշ կառուցվածքների մասերի բառակազմի տարբերություններ կարող են առաջ բերել դրանց մեջ առկա սպասարկու բառերը (հարաբերյալներ, բառային միջոցներ, որոնք նպաստում են մասերի միջև կապի դրսևորմանը) և Համեմատենք, օրինակ, հետևյալ կառուցվածքները.

Երբ Արայիկը դաս էր պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում էր:

Ուսուցիչը գոհ ժպտում էր այն ժամանակ, երբ Արայիկը դաս էր պատասխանում:

Ամեն անգամ, երբ Արայիկը դաս էր պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում էր և այլն:

Ակնհայտ է, սակայն, որ շարահյուսական համանիշներ չեն կարող համարվել այնպիսի բարդ նախադասություններ, որոնք նույն բովանդակությունն արտահայտում են տարբեր բառակազմ ունեցող կառուցվածքներով: Օրինակ՝

Երբ նա սանրում էր մազերը, դրսում հորդ անձրև էր տեղում:

Երբ նա հարդարում էր վարսերը, բակում մոլեգնում էր տեղատարափը:

Այսպիսով, մենք փորձեցինք ժամանակային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների հիման վրա առաջադրել ընդհանրապես բարդ նախադասությունների համանիշության հարցին վերաբերող որոշ ընդհանուր նկատառումներ, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտաբար պետք է հաշվի առնվեն բարդ նախադասությունների ոլորտում համանիշական կապերի կոնկրետ նկարագրության ընթացքում:

13 Ն. Ա. Պ ա ո ն ա ս յ ա ն, Նշվ. աշխ., էջ 37:

К СИНОНИМИКЕ СЛОЖНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ

ЛЕОНИД ТЕЛЯН

Резюме

Парадигму сложного предложения составляют все смысловые и грамматические модификации его структуры, которые характеризуются общностью значения. Среди всех структурных вариантов сложного предложения, выражающих одинаковые смысловые отношения, выделяются два семантических поля—гипонимическое и синонимическое. К первому относятся те варианты сложного предложения, которые различаются модально-временными характеристиками частей, а в синонимическое поле входят структурные варианты, различающиеся формами выражения связи частей. Для обоих семантических полей выделяются доминанты. Доминантой синонимического поля временных сложных предложений является сложноподчиненная структура с относительным словом *когда*. Внутри синонимического поля выделяются группы конструкций (абсолютные синонимы—*когда*—и синонимы) по признаку смысловой близости к доминанте.

Конструкции, выражающие одинаковое смысловое отношение, но различающиеся грамматическими отношениями между частями, находятся вне синонимического поля и называются смежными.